678 Որդին Աստծո իջավ, մարդացավ,

1. Որդին Աստծո իջավ, մարդացավ,
Թշվառիս համար Նա մարմին հագավ,
Թուք ու նախատինք Իր վրա կրեց,
Մեղավորներիս մահից ազատեց:

Նրա արյունը ճանապարհ բացեց,
Մարդուն Աստծո հետ հաշտեցրեց,
Իր խաչի գործով մեզ արդարացրեց,
Երկնավորներում նստեցրեց:

2. Հիմա Հայր Աստծո աջ կողմում նստած՝
Բարեխոսում է Հորը մեզ համար,
Խնդրելով Աստծուն, վերքերը պարզած.
«Հա՛յր, ների՛ր նրանց, գթա՛, ողորմա՛ծ...»:

3. Հիմա Տիրոջն ենք կանչում այս վայրում՝
Կանչելով Նրա հրաշք Սուրբ Հոգուն.
«Արի՛, Տեր Հիսուս, կարոտել ենք Քեզ,
Տե՛ր, արի՛ և ամուր գրկի՛ր մեզ»: